ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի հանրապետության Արարատի մարզի
Ավշար համայնք, գյուղ Ավշար Անդրանիկի 1
Հեռախոս՝ 4-21-79

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«14» նոյեմբերի 2012 թվականի N 12 - Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի՝ ավագանին որոշում է.

1. Ընդունել համայնքի ավագանու կանոնակարգը համաձայն հավելված թիվ 1:

կողմ /9/ դեմ /0/ ձեռնպահ /0/

ԱՌԱՔԵԼՅԱՆ	ԿԱՌԼԵՆ	
ԲՈՒԴՈՒՄՅԱՆ	ՄԱՅԻՍ	
ԳՐԻԳՈՐՅԱՆ	ԱՐՄԵՆ	
ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ	ՍՄԲԱՏ	
ՀԱԿՈԲՅԱՆ	ԶԱՎԵՆ	
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ՆԿԵՐ	
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ	ԳԱԳԻԿ	
ՄԻՆԱՍՅԱՆ	ՀՈՎԻԿ	
ՄԻՐԶՈՅԱՆ	ՅՈՒՐԻ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված N1
Ավշար համայնքի ավագանու
2012թվականի նոյեմբերի 14-ի
N 12-Ն որոշման

ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կանոնակարգը ընդունվում է 2002թ. մայիսի-7ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2007թ մայիսի 02-ին 2012թվականի փետրվարի 8-ին ընդունված օրենքների հիման վրա:

1.2 Ավշար համայնքի ավագանին, այսուհետև համայնքի ավագանին, իր լիազորությունները իրականացնում է ՀՀայաստանի Հանրապետության Սահմանադրություն պահանջներին և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքվ և այլ օրենքներով ու իրավական ակտերով և գործում է սույն կանոնակարգին համապատասխան:

1.3 Ավշար համայնքի ավագանու նիստերը գումարվում են գյուղապետարանում:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

2.1 Համայնքի ավագանին կազմավորված է համարվում եթե ընտրվել է ավագնու 9 անդամների կեսից ավելին:

2.2 Համայնքի ավագանին ընդունում է սույն կանոնակարգը, որը կարգավորում է ավագանու գործունեությունը, նիստերի նախապատրաստումը և անցկացումը: Ավագանու նիստերը անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Ավագանին կարող է անցկացնել արտահերթ նիստեր: «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում կազմում է արձանագրություններ:

Համայնքի շահերին վերաբերվող, բայց իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի առնչությամբ ընդունում է ուղերձներ ուղղված համայնքի բնակչությանը, համայնքի ղեկավարին, Արարատի մարզպետին կամ պետական այլ մարմիններին:

Համայնքի անունից համայնքի ավագանին իրականացնում է համայնքային կառավարչական հիմնարկի հիմնադրի գործառույթներ:

2.3 Ավագանու նիստերի օրակարգի նախագծերը ձևավորում են համայնքի ղեկավարը և ավագանու անդամները գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարին նիստից առնվազն 10 օր առաջ ներկայացրած գրավոր հարցերից:

Հարցերի հեղինակները պետք է ներկայացնեն որոշման նախագծեր, որոնց կցվում են նաև դրա ընդունման անհրաժեշտության հիմնավորումները և յուրաքանչյուր որոշման նախագծի իրականացման ֆինանսական ծախսերի նախահաշիվները:

Նիստի օրակարգի նախագիծը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը նիստն սկսելուց առնվազն 7 օր առաջ տրամադրվում են ավագանու անդամներին:

Ավագանու հերթական. նիստից առնվազն 7 օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է տեղեկություն ավագանու նիստի ժամանակի, վայրի վերաբերյալ և օրակարգի նախագիծը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքնչյուր երկու հազար բնակչի համար:

Նիստի օրակագը հաստատվում է ավագանու որոշմամբ:

2.4 Նորընտիր ավագանու առաջին նիստը գումարվում է ոչ ուշ քան ավագանու լիազորություններն ստանձնելու պահից քսան օրվա ընթացքում:

2.5 Ավագանու նիստը հրավիրում և վարում է գյուղապետը կամ պաշտոնակատարը, որոնք ունեն խորհրդակցական ձայնի իրավունք:

2.6 Ավագանու նիստը իրավազոր է. եթե նիստին ներկա են ավագանու անդամների կեսից ավելին: Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովում նիստի իրավազորությունը կամ նիստին չի ներկայանում գյուղապետը և նիստը չի սկսվում, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, այն ստորագրում են ավագանու նիստին ներկայացած անդամները:

2.7 Ավագանու որոշումները և ուղերձները ընդունվում են ավագանու՝ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները, որոնց դիմաց նրանք ստորագրում են: Ավագանու որոշումները կնքում է գյուղապետը: Ավագանու նիստը շարունակվում էմինչև օրակարգի սպառումը:

Նիստը կարող է ընդհատվել ավագանու որոշմամբ կամ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքում:

Համայնքի ավագանու նիստը դռնբաց է: Նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ նիստ: Ավագանին նիստին կարող է հրավիրել և լսել ցանկացած անձի: Գյուղապետի հրավերով նիստին մասնակցում են նրա աշխատակազմի աշխատակիցները: Ավագանու որոշումների վերաբերյալ գյուղապետը եռօրյա ժամկետում ավագանուն կարող է ներկայացնել գրավոր առարկություններ և

առաջարկություններ, եթե որոշումը իր կարծիքով հակասում է օրենքին կամ ավագանու նախկին որոշումներին: Եթե գյուղապետն ավագանու որոշման դեմ առարկում է ապա եռօրյա ժամկետում հրավիրում է ավագանու արտահերթ նիստ, իսկ որոշման կատարումը հետաձգվում է մինչև ավագանու կողմից դրա քննարկումը: Ավագանին քննարկում է նշված առարկությունները և որոշում է ընդունում նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ: Նշված նիստում և նախատեսված ժամկետներում որոշումը չվերանայելու կամ ավագանու նիստը չկայանալու դեպքում որոշումն ուժի մեջ է մտնում և ենթակա է պարտադիր կատարման: Ավագանու որոշումները գյուղապետը կարող է բողոքարկել դատական կարգով:

2.8 Համայնքի ավագանու անդամը համայնքի ղեկավարի որոշումները ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում կարող է պահանջել հրավիրել ավագանու արտահերթ նիստ, եթե համայնքի ղեկավարի որոշումը իր կարծիքով հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին: Այդ դեպքում ավագանու նիստը պետք է հրավիրվի այդ մասին պահանջը համայնքի ղեկավարի ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Եթե ավագանին գտնի որ համայնքի ղեկավարի որոշումը հակասում է օրենսդրությանը, ապա նա պարտավոր է համայնքի ղեկավարին ներկայացնել գրավոր առարկություններ և առաջարկություններ՝ համապատասխան հիմնավորումներով՝ առաջարկելով համայնքի ղեկավարին փոխելու իր բողոքարկող որոշումը: Համայնքի ղեկավարի բողոքարկվող որոշումը փոխելու մասին համայնքի ավագանու որոշումը համայնքի ղեկավարին հանձնելու պահից համայնքի ղեկավարի բողոքարկվող որոշման գործողությունը կասեցվում է մինչև համայնքի ղեկավարի կողմից դրա քննարկումը, եթե բողոքարկվող որոշումը դեռևս չի կատարվել, և եթե բողոքարկվող որոշման կատարումը հնարավոր է հետաձգել:

Համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում պարտավոր է քննարկել ավագանու որոշումը և կայացնել իր բողոքարկվող որոշումը օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին համապատասխանեցնելու կամ ավագանու որոշումը չնդունելու մասին:

Համայնքի ղեկավարը իր որոշումը պարտավոր է անմիջապես ուղարկել ավագանու անդամներին:

Համայանքի ղեկավարի կողմից սույն մասով նշված համապատասխան որոշումներից որևէ մեկն ընդունելու պահից որոշման կասեցումը դադարեցվում է: Եթե համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում ավագանու որոշման վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում ապա համայնքի ղեկավարի բողոքարկող որոշումը համարվում է վերացած:

2.9 Ավագանու արտահերթ նիստը գումարում է գյուղապետը կամ նրա պաշտոնակատարը՝ իր կամ ավագանու անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ: Ավագանու արտահերթ նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով և ժամկետում: Արտահերթ նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը ավագանու անդամներին տրամադրվում են նիստից մեկ օր առաջ:

3. <u>ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ</u>

Համայնքի ավագանին «Տեղական ինքնակառավարման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

3.1 Ընդունում է իր կանոնակարգը:

3.2 Հաստատում է համայնքի զարգացման ծրագիրը:

3.3 Հաստատում է համայնքի բյուջեն, բյուջեի՝ գյուղապետի առաջարկած փոփոխությունները և բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը:

3.4 Վերահսկում է բյուջեի կատարումը և համայնքի ստացած վարկերի և այլ ներգրավված ֆինանսական միջոցների օգտագործումը:

3.5 Գյուղապետի ներկայացմամբ որոշում է կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

3.6 Նախաձեռնում և օրենքով սահմանված կարգով նշանակում է տեղական հանրաքվեն:

3.7 Վերահսկողություն է իրականացնում գյուղապետի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ: Կարող է վիճարկել համայնքի ղեկավարի օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումները դատական կարգով:

3.8 Որոշում է գյուղապետի վարձատրության չափը:

3.9 Որոշում է կայացնում առաջարկություն ներկայացնել մարզպետին, գյուղապետին պաշտոնանկ անելու վերաբերյալ:

3.10 Որոշում է կայացնում միջհամայնքային միավորումներ ձևավորելու մասին, ինչպես նաև առաջարկություն է ներկայացնում պետական լիազորված մարմին այլ համայնքների հետ միավորելով նոր համայնք ստեղծելու և իր ներկայացուցիչը նշանակելու վերաբերյալ,:

3.11 Որոշում է կայացնում պետական մարմիններից և պաշտոնատար անձանցից համայնքի խնդիրներին վերաբերող և գաղտնի տեղեկություններ չպարունակող փաստաթղթեր ստանալու վերաբերյալ:

3.12 Որոշում է կայացնում ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

3.13 Որոշում է կայացնում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմավորման կամ լուծարման մասին:

3.14 Իր որոշմամբ համաձայնություն է տալիս համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին:

3.15 ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատում է համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերը, որտեղ իր ներկայացուցիչների թիվը կարող է լինել միայն կեսից պակաս:

3.16 օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը:
3.17 Սահմանում է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը:
3.18 Իրականացնում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ լիազորություններ:
3.19 Համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը: Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու դեպքում համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը:
3.20 Որոշում է կայացնում համայնքային նշանակության փողոցների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկներ ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ:
3.21 Իր որոշմամբ վավերացնում է Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների համայնքների հետ համագործակցելու պայմանագիրը:
3.22 Որոշում է կայացնում վարկերի և այլ միջոցների ներգրավման վերաբերյալ:
3.23 Որոշում է կայացնում համայնքի ավագանու կողմից՝ իրենց կանոնակարգին համապատասխան Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու կամ պատվավոր կոչումից զրկելու վերաբերյալ:
3.24 Համայնքի ղեկավարի ներկայացմամբ որոշում է ընդունում աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ: Համայնքային ծառայության պաշտոնների մասով աշխատակազմի աշկատակիցների թվաքանակը /կամ/ հաստիքացուցակը հաստատելու, ինչպես նաև փոփոխելու և /կամ/ լրացնելու հարցում որոշում է կայացնում համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և /կամ/ լրացումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին դիմելու մասին:
3.25 որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:
3.26 Հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:
3.27 Պետական լիազորված մարմնին առաջարկություն է ներկայացնում կամ համաձայնություն է տալիս գյուղի անվանափոխության վերաբերյալ:
3.28 Համայնքի ավագանին իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

4. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

Համայնքի ավագանու անդամը չի կարող միաժամանակ.
ա/ Աշխատել նույն աշխատակազմում, համայնքի բյուջետային հիմանարկներում, լինել համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավար:
բ/ Լինել մեկ այլ համայնքի ղեկավար :
գ/ Աշխատել իրավապահ, պետանվտանգության և դատական մարմիններում:
Կամ զինծառայության անցնելիս ավագանու անդամը պետք է մինչև ավագանու հերթական նիստը գրավոր հրաժարվի ավագանու անդամությունից: Հակառակ դեպքում նրա լիազորությունները դադարեցվում են:

4.1 Համայնքի ավագանու անդամի իրավունքները.

Համայնքի ավագանու անդամը իրավունք ունի՝
ա/ առաջարկություն ներկայացնել ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ.
բ/ Նախապատրաստել և ավագանու քննարկմանը ներկայացնել հարցեր, որոշումների և ուղերձների նախագծեր:
գ/ գյուղապետից պահանջել և ստանալ նրա գործունեության վերաբերյալ պաշտոնական տեղեկանքներ:
դ/ Ավագանու և գյուղապետի որոշումները կամ գործողությունները բողոքարկել դատարան, եթե խախտվել է նրա որպես ավագնու անդամի իրավունքները:
ե/ Ստանալ դրամական փոխհատուցում «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իր պարտականությունները իրականացնելու հետևանքով կատարած ծախսերի դիմաց:

4.2 Համայնքի ավագանու անդամի պարտականությունները:

Համայնքի ավագանու անդամը պարտավոր է.
ա/ Մասնակցել ավագանու նիստերին
բ/ Պարբերաբար հանդիպել համայնքի բնակչության հետ, համայնքի ընտրողներին տեղեկացնել ավագանու աշխատանքների մասին.

գ/ Մասնակցել ավագանու կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելություններին.
դ/ Չմասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որն առնչվում է իր ընտանիքների անդամների և մերձավորների / ծնող, եղբայր, քույր, երեխա/ շահերին.
ե/ անհամատեղելի պաշտոններում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում անհապաղ գրավոր տեղյակ պահել ավագանուն կամ գյուղապետին:

4.3 Համայնքի ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը

Համայնքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են.
ա/ Դադարեցվել է նրա ՀՀ քաղաքացիությունը.
բ/ Նա դադարել է գյուղի բնակիչ լինելուց.
գ/ Դատարանի վճռով նա դատապարտվել է ազատազրկման և կրում է պատիժը.
դ/ Նա զորակոչվել է կամ ծառայության է անցել զինված ուժերում.
ե/ Դատարանի վճռով նա անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել.
զ/ Նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն է զբաղեցնում.
է/ Նա մեկ տարվա ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից.
ը/ Նա հրաժարական է տվել
թ/ Նա մահացել է.
Բացառությամբ ավագանու անդամի մահանալուց, մնացած դեպքերում ավագանու անդամի լիազորությունները դադարեցվում են ավագանու հերթական նիստը սկսելու պահից: Որի համար կազմում է արձանագրություն:

4.4 Համայնքի ավագանու լիազորությունների
վաղաժամկետ դադարեցումը.

ա/ Եթե ավագանու անդամների մի մասի լիազորությունները դադարեցնելու հետևանքով անհնարին է դառնում նիստերի հետագա անցկացումը, ապա ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են ավագանու մնացած անդամները:
Արձանագրությունը մարզպետի միջոցով ներկայացվում է վերադաս մարմիններին, որի հիման վրա կառավարությունը նշանակում է ավագանու արտահերթ ընտրություններ:

5. Համայնքի ղեկավարի իրավասությունը

Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով.
5.1 Հրավիրում և վարում է ավագանու նիստերը.
5.2 Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը ներկայացնում է ավագանու հաստատմանը.
5.3 Հաստատում է աշխատակազմի բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները.
5.4 Աշխատակազմի և բյուջետային հիմանարկների կանոնադրությունների, կառուցվածքների վեաբերյալ որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.
5.5 Ավագանու հաստատմանն է ներկայացվում աշխատակազմի և բյուջետային հիմանրկների աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ որոշման նախագծերև դրանցում առաջարկվող փոփոխությունները.
5.6 Համայնքային ենթակայության բյուջետային հիմանրկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը.
5.7 Ավագանու հաստատմանն է ներկայացվում համայնքային ենթակայության առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծերը.
5.8 Նշանակում և ազատում է գյուղապետի տեղակալին, աշխատակազմի քարտուղարին կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին.
5.9 Համայնքի ավագանու որոշմամբ նշանակվում և ազատվում է համայնքի բյուջետային հիմնարկների ղեկավարներին: Ավագանու կողմից երկու անգամ համաձայնություն չտալու դեպքում գյուղապետը նշանակում է կատարում առանց համաձայնեցնելու ավագանու հետ:
5.10 Ավագանու հաստատմանն է ներկայացնում տեղական հանրաքվե անցկացնելու մասին որոշման նախագիծը:
5.11 Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ կնքվում է համագործակցության մասին պայմանագիր դրանք ներկայացնում է համայնքի ավագանու վավերացմանը;
5.12 Համայնքի ավագանու սահմանած կարգով կնքում է համայնքի սեփականությունը վարձակալության հանձնելու պյմանագրերը:
5.13 Համայնքի ավագանու որոշմամբ և սահմանված պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայքի սեփականություն համարվող գույքը.

5.14 Ավագանու հաստատմանն է ներկայացնում առաջարկ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու վերաբերյալ:
5.15 Ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի անվանման և վերանվանման ենթակա փողոցների, հրապարակի, համայնքային ենթակայության կրթական և մշակութային հաստատությունների անվանման և վերանվանման մասին որոշման առաջարկություն.
5.16 Սահմանում է շենքերի և շինությունների համարակալումը.
5.17 Իր իրավասության շրջանակներում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում է կարգադրություններ.
5.18 Վարում է համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրերը.
5.19 Միջոցներ է ձեռնարկում քաղ պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տարերային աղետների վտանգների նվազեցման և հետևանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման համար.
5.20 Իրականացնում է Հայկաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանադրությամբ և սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ.

6. Համայնքի զարգացման ծրագիրը և բյուջեն

6.1 Համայնքի զարգացման ծրագիրը

Համայնքի ղեկավարը մշակում է Ավշար գյուղի քառամյա զարգացման ծրագիր և այն ներկայացնում է ավագանու հաստատմանը՝ ավագանու լիազորությունների ստանձնման օրվանից եռամսյա ժամկետում:

Ավագանին քննարկում է ներկայացված ծրագիրը, կատարում է փոփոխություններ և ընդունում է այն իր որոշումով:

6.2 Համայնքի բյուջեն

Համայնքի բյուջեն եկամուտների և ծախսերի մեկ տարվա ֆինանսական ծրագիր է, որը նպատակաուղղված է համայնքի քառամյա զարգացման ծրագրի և համայնքի օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը:
Համայնքի ավագանին ամեն տարի հաստատում է համայնքի բյուջեն: Ավագանին բյուջեում փոփոխություններ է կատարում գյուղապետի առաջարկությամբ:
Ավագանին հաստատում է եռամսյա և տարեկան կատարման հաշվետվությունը:

6.3 Համայնքի բյուջեի քննարկումը և հաստատումը

Գյուղապետը կառավարությունից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքին տրամադրվող դոտացիայի նախնական թվերը ստանալուց հետ երկամսյա ժամկետում մշակում և ավագանու հատսատմանն է ներկայացնում համայնքի բյուջեի նախագիծը, որն ավագանու անդամներին է տրամադրվում քննարկումից մեկ շաբաթ առաջ: Ավագանու անդամները բյուջեի նախագծի վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առաջարկություններ, որոնք պետք է քննարկվեն ավագանու նիստում, եթե ավագանու անդամի առաջարկությունը նախատեսում է նոր ծախսեր ապա նա պետք է նշի այդ ծախսերի ֆինանսական աղբյուրները:
Գյուղապետը քննարկումից հետո կարող է վերցնել մեկ շաբաթ ժամանակ նախագծում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար: Ապա հրավիրում է ավագանու նիստ և ներկայացնում է իր կարծիքը առաջարկված փոփոխությունների վերաբերյալ: Բյուջեի նախագիծը գյուղապետի փոփոխություններով քվյարկության է դրվում ամբողջությամբ: Ավագանու կողմից այն չնդունելու դեպքում նոր բյուջեի նախագծի քննարկման ժամկետը որոշում է ավագանին, այն համաձայնեցնելով գյուղապետի հետ, կամ գյուղապետը հրավիրում է արտահերթ նիստ:
Եթե ավագանին միչև տարվա սկիզբը համայնքի բյուջեն չի ընդունում, ապա ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:
Համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում գյուղապետը կարող է դնել հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը:
Եթե համայնքի ավագանին գյուղապետի հրաժարականի վերաբերյալ դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում ավագանու անդամների թվի ձայների կեսից ավելիով նման որոշում չի ընդունում ապա համայնքի բյուջեն հաստատված է գյուղապետի կատարած ուղումներով:
Իսկ գյուղապետի հրաժարականն ընդունելիս, ավագանու որոշումը մարզպետի միջոցով ներկայացվում է << կառավարությանը: Եթե դիմումն ընդունելուց հետո մեկ ամսվա ընթացքում կառավարությունը հրաժարական ընդունելու մասին որոշում չի կայացնում ապա համայնքի բյուջեն համարվում է ընդունված:

6.4 Համայնքի բյուջեին ներկայացվող պահանջները և բյուջեի ձևավորման աղբյուրները.

ա/ Համայնքի բյուջեում նախատեսված ծախսերը չեն կարող ավել լինել նախատեսված մուտքերից: Բյուջեի եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումը կազմում է բյուջեի դեֆիցիտը:

Բյուջեի դեֆիցիտը պետք է ֆինանսավորվի օրենքով սահմանված կարգով ներգրավվող փոխառու և պետական միջոցներից կատարվող մասհանումների միջոցով:
բ/ Համայնքի բյուջեն ձևավորվում է համայնքի բյուջեի օրենքով և իրավական այլ ակտերով ամրագրվող մուտքերից, այդ թվում՝

1. Հարկային եկամուտներ՝

ա/ տեղական հարկերից՝
-- հողի հարկ՝ համայնքի վարչական տարածքում գտնվող հողի համար.
-- գույքահարկ՝ համայնքի վարչական տարածքում գտնվող գույքի համար.
բ/ հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ:

2. Այլ եկամուտներ , այդ թվում՝

ա/ վարձակալության տրված համայնքի հողերից գանձվող վարձավճարներ
բ/ համայնքի սեփականություն հանդիսացող հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից առաջացած եկամուտներ.
գ/ վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կիրառած պատժամիջոցներից առաջացած եկամուտներ.
բ/ տեղական վճարներ
գ/ գյուղապետարանի կողմից օրենքով գանձվող և համայնքի բյուջեի եկամուտներին հաշվանցման ենթակա այլ վճարներ.
դ/ համայնքային սեփականություն համարվող , ինչպես նաև տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ֆիզիկական և իրավաբանական նվիրատվության կարգով համայնքին որպես սեփականություն անցած հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից եկամուտներ.

4. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվող միջոցներ՝

ա) համայնքային սեփականություն համարվող հիմնական միջոցների, հողերի և ոչ նյութական ակտիվների օտարումից, այդ թվում՝ համայնքի սեփականությունը հանդիսացող լուծարված կազմակերպությունների մնացորդային գույքի օտարումից ստացվող միջոցները.

5. Պաշտոնական դրամաշնորհների ձևով ստացվող հատկացումներ, այդ թվում՝

ա) պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ.

6.5 Համայնքի մատուցած ծառայությունների դիմաց գանձվող վճարները

Բնակչությանը մատուցած ծառայությունների՝ այն է ջրամատակարարման, աղբահանուցյան և այլ ծառայությունների իրականացման համար սահմանվում է վճարներ: Վճարի չափը գյուղապետի ներկայացմամբ հաստատում է ավագանին:

6.6 Համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերը
Բյուջեի պահուստային ֆոնդը

ա/ Բյուջեի վարչական մասը ձևավորվում է համայնքային բյուջեի եկամտային մասում ամրագրված հողի հարկից, գույքահարկից, եկամատահարկից, շահութահարկից, գանձվող տուգանքներից և տույժերից, պետական տուրքերից, անշարժ գույքի, այդ թվում անավարտ շինարարության օբյեկտների մասնավոեցումից ստացվող մուտքերից, պարտադիր վճարներից, պետության պատվիրակված լիազորությունների իրականացման համար նախատեսված պետբյուջեի հատկացումներից, դոտացիաներից:
բ/ բյուջեի ֆոնդային մասը ձևավորվում է այն աղբյուրներից, որոնք ուղղված չեն բյուջեի վարչական մաս: Համայնքի բյուջեի վարչական մասից ֆինանսավորվում են պարտադիր և կամավոր լիազորությունների իրականացման հետ կապված ընթացիկ բյուջետային փոխատվությունների մարման և պետության պատվիրակված լիազորությունների կատարման ծախսերը: Համայնքի բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորվում են պարտադիր և կամավոր լիազորությունների իրականացման հետ կապված կապիտալ և ստացված վարկավորման ծախսերը:
գ/ համայնքի բյուջեն ունի պահուստային ֆոնդ, որը կարող է օգտագործվել տվյալ տարվա բյուջեով չնախատեսված ծախսերի կամ նանախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման համար:
Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդը կարող է նախատեսվել բյուջեի վարչական մասի եկամուտների 5-20 %-ի չափով:
Համայնքի բյուջեի ֆոնդային մասով կարող է ձևավորվել պահուստային ֆոնդ, որը չի կարող գերազանցել բյուջեի ֆոնդային մասի եկամուտների 30%-ը:
Վարչական մասի պահուստային ֆոնդից կարող են ֆինանսական միջոցներ ուղղվել ֆոնդային մաս: Ֆոնդային մասի ֆինանասական միջոցները չեն փոխանցվել բյուջեի վարչական մաս:
Պահուստային ֆոնդը օգտագործվում են միայն ավագանու որոշմամբ:
դ/ Համայնքի զարգացման քառամյա ռազմավարական ծրագիրը և տարեկան բյուջեն հրատարակվում են ի ծանոթություն բնակչությանը.
ե/ Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների, գույքի վարձակալությունից և օտարումից ստացվող մուտքերը ապահովում են գյուղապետարանի համապատասխան ստորաբաժանումները:

գ/ Եկամտահարկի, շահութահարկի մասհանումների մուտքը համայնքի բյուջե ապահովում է հարկային տեսչությունը:
է/ համայնքի բյուջեի կատարման վերահսկաղությունն իրականացնում է համայնքի ավագանին, որը իրավազոր է ստուգել ցանկացած բյուջետային գործողություն, աշխատանքների կատարման արդյունավետությունը և որակը, պահանջել հաշվետվություններ կատարված ծախսերի վերաբերյալ:
Բյուջեի կատարման վեահսկողությունը մշտապետս և արդյունավետ իրականացվելու նպատակով ավագանին կարող է սահմանված կարգով ներգրավել աուդիտորական ծառայություն:
Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվա հաջորդող տարվա մարտի 1-ը:
Համայնքի ղեկավարի ներկայացրած բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ աուդիտորական վերստուգիչ մարմինը համայնքի ավագանուն նրկայացնում է իր ուսումնասիրության արդյունքները և եզրակացությունը:
Քննարկումից հետո ավագանին որոշում է կայացնում բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին:
Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունը չհաստատելու դեպքում ավագանին, օրենքով սահմանված կարգով, կարող է գյուղապետին պաշտոնանկ անելու մասին առաջարկություն ներկայացնել: Եթե նման առաջարկություն չի ներկայացվում կամ կառավարությունը գյուղապետին պաշտոնանկ անելու մասին առաջարկությունը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված:
Հայաստանի Հանրապետությունում ժողովուրդն իր իշխանությունը իրականացնում է անմիջապես, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Տեղական ինքնակառավարման մարմինները պետական կառավարման մարմինների մասը չեն: Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացումը պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից արգելվում է, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «ՀՀ տեղական ինքնակառավարման մասին» օրենքով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ